ՀՄԿ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

‹‹Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման հմտությունների զարգացման ապահովում›› ծրագրի

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ‹‹Քեթիի միջնակարգ դպրոց›› ՊՈԱԿ

Առարկա՝ Հասարակագիտություն

Թեմա՝ Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանում

Վերապատրաստող ,մենթոր ՝ Լաուրա Գրքիկյան

Ուսուցիչ՝ Մինասյան Սվետլանա

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանում 5

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակ. Հետազոտական աշխատանքիս ուսումնասիրության թեման է «Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանում»: Աշխատանքս կատարելիս նպատակ եմ ունեցել դասավանդման ժամանակ բաձրացնել հարցեր, որոնք կապահովեն սովորողների իրավունքներն ու ազատությունները: Կիրառելով դասավանդման արդի մեթոդներ՝ նոր չափորոշիչներ, հմտություններ ու կարողություններ, ցանկացել եմ հասնել այն հարցի լուսաբանմանը, որ բոլոր երեխաները, անկախ իրենց տարիքից, սոցիալական վիճակից ու սեռից իրավունք ունեն լինել պաշտպանված,ազատ,ստանալ համապատասխան գիտելիք ու կրտություն, որով կապահովվի իրենց գալիքն ու ապագան:Ընտրելով այս թեման նպատակ եմ ունեցել մեկ անգամ ևս հասկանալու, թե ինչքան կարևոր է դպրոցի դերը առողջ հասարակություն ունենալու հարցում: Դպրոցն է դնում այն հիմնաքարը , որի վրա պետք է բարձրանան երկրին ու պետությանը պետքական բոլոր կառույցները: Այսօր մեր հայրենիքին պետք են աշխարհի մարդահրավերներին դիմակայող անպարտ սերունդ, որն ունենալով իր ձեռքին ամենահզոր զենքը ՝ գիտելիքը, կկարողանա մարդկությանը ապացուցել, որ հայը կա ու պետք է լինի: Ես նպատակ եմ ունեցել վեր հանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների օրինական պահանջները, որոնք ոչնչով չեն տարբերվում մնացած երեխաներից: Ավելին, նրանց մոտ կան այնպիսի արժեքներ, որոնք հնարավոր է բացակայում են սովորական երեխաների մոտ: Մնում է նրանց ընդառաջ գնալ, լինել անսահման ուշադիր, հոգատար, գիտելիքից բացի հնարավորություն տալ նրանց վստահ լինելու իրենց ուժերի ու կարողությունների վրա:Աշխատանքիս նպատակն է հիմնավորել այն կարևոր գաղափարը, որ նորօրյա դպրոցին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առակայից խորը գիտելիք տալը, այլ նաև դասավանդման նպատակների ու դրանց կենսագործմանն ուղղված խնդիրների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Իսկ սա նոր սերնդին կտա այն ինչ անհրաժեշտ է իրեն:

Խնդիրները. Հետազոտական աշխատանքիս խնդիրն է, բարձրացնել այն հիմնական հարցերը, որոնք լուծման պահանջ ունեն կրթության համակարգում: Կարևոր եմ համարում մեկ անգամ ևս կրկնել ուսուցչի ամենառաջնային խնդիրը՝

- Ի՞նչ սովորեցնել,
- Ինչ՞ու սովորեցնել,
- Ինչպե՞ս սովորեցնել:

Ցանկացել եմ տալ այն հարցի պատասխանը, թե ինչու է ուսումն ու դաստիարակությունն անհրաժեշտ ու պարտադիր.

- Գիտելիքով զինված մարդը անպարտ է,
- Գիտելիք և դաստիարակություն ունեցող մարդը, ինտեգրվելով հասարակությանը դառնում է լիարժեք անդամ և մասնակցում դրա առողջացմանը,
- ԿԱՊԿՈՒ երեխաները ունեն նույն պահանջներն ու իրավունքները, ինչը ապպահովում է պետությունը:

Արդիականություն

Նոր ծրագրեր, նոր մեթոդներ, հմտություններ, կարողություններ: Այս ամենը կիրառելով հնարավորություն կտա սովորողին ձեռք բերել գիտելիք, լինել ազատ, պաշտպանված, որով և կկարողանա ինտեգրվել և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Երեխաները համարվում են հասարակության ավելի խոցելի խումբը։ Դա է պատճառը, որ յուրաքանչյուր երկրում անհրաժեշտ է պահպանված և ապահով լինի երեխայի ներկան և ապագան։ Այս հարցով լուրջ աշխատանք է կատարվում ոչ միայն տեղական այլ նաև միջազգային համապատասխան կառույցներում։ Գրվում և մշակվում են ծրագրեր, կո- նվենցիաներ, որոշումներ որոնք ունեն մի նպատակ՝ ապահովել երեխայի անվտանգու- թյունը, ազատ լինելու կամքը։ Երեխայի պաշտպանվածության հարցը արդի ժամանակաշ- րջանում ամենաակտուալն է։ Այդ չափազանց կարևոր խնդրի լուծումը սկսվում է մանկապ-արտեզից ու դպրոցից։ Հարցի լուծում տվողը դա ուսուցիչն է, որից էլ կապված է մեր ապա- գան։ Ուրեմն առողջ հասարակություն ունենալու խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ու նենալ նոր ուսումնական համակարգ, նոր ծրագրերով, նոր չափորոշիչներով, նոր կարողու- թյուններով ու հմտություններով։Հիմա դպրոցից պահանջվում է հասարակությանը տալ սերունդ, որը զինված կլինի խորը գիտելիքներով, վստահ քայլերով կշարունակի իր նախընտրած կյանքի ճանապարհը։ Սերունդ, որը կկարողանա պաշտպանել իր իրավունքները ու ազատությունները։Նորօրյա դպրոցի առջև դրված է նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հարաճյուն խնդիրները, որոնք սկսել են լուծվել մեր երկրում։ ՀՀ-ն կրթության համակարգում անցում է կատարվում համընդհանուր ներառականության։ Հանրապետության բոլոր դպրոցները սկսում են իրականացնել ներառական կրթություն։ Այս կարևոր գործընթացի հիմքը հանդիսանում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարված անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները։Օրենքի 4-րդ հոդվածը ունի հետևյալ բովանդակությունը «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»։ՆԵրառական կրթությունը պետք է ապահովի կրթության մատչելիություն, հավասար մասնակցություն և որակի ապահովում։Ուրեմն ներառական կրթությունը հիմնվում է «Հավասար իրավունքները, հավասար հնարավորություններ բոլորին» մոտեցման վրա։ Այն բացառում է ամեն տեսակի բռնություն, անհավասարություն և ապահովում է անհատական մոտեցում ու կայուն գիտելիք։

Դրանով ստեղծվում են պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար: Ուրեմն ուսուցիչը, որի վրա դրված է կրթության ողջ ծանրությունը, իր առակայի դասավանդման ժամանակ եթե դասարանում կան ԿԱՊԿՈՒ երեխաներ, պետք է լինի էլ ավելի ուշադիր, զգոն և պատասխանատվություն կրի նրա նկատմամբ:Ուսուցիչը պետք է կիրառի նոր մեթոդներ, աշխատի նոր չափորոշիչներով, որպեսզի սովորողը չտուժի, իրեն զգա դասարանի լիիրավ անդամ:

Աշխատանք գրավոր և բանավոր խոսքի խանգարում ունեցող երեխաների հետ

Ինչպես աշխատել, եթե դասարանում կա գրավոր և բանավոր խոսքի խանգարում ունեցող աշակերտ: Օրինակ, եթե խանգարումը զգացվում է կակազումի ձևով: Ուսուցչից պահանջվում է լինել էլ ավելի ուշադիր, հարկալից ու համբերատար: Տեղին է հարցերը կրկնել մի քանի անգամ, հանգիստ լսել երեխային, սխալները ուղել մեղմ, հանգիստ շարժումներով, բարեհամբյուր և հանգիստ, ժպիտներով, դրսևորել խրախուսող վերաբերմունք: Խոսելիս երեխային նայել բայրացկամ հայացքով, բացառել ճնշումը երեխայի վրա, կոպտությունը: Երեխայի մեջ համոզմունք առաջացնել, որ իր մտքերը ճիշտ են, որ ինքը ունի կարձիք, որ ճիշտ է խոսում, որ եթե այդպես աշխատի շատ բանի կհասնի:Գրավորի ժամանակ ուշադրություն չդարձնել վայելչագրության կանոնների խաղտմանը: Խրախուսելու համար գնահաել բարձր, գովեստի խոսքեր ասել դասարանում, դասի ժամանակ .

- Տեսեք ինչ պարտաճանաչ է:
- Տանը լավ աշխատել է:
- Օրինակ վերցրեք իրենից:
- Ապրես, որ այդքան ընկերասեր ես:

Այս ամենը հավատ, հույս ու սեր կառաջացնի երեխայի մեջ: Զգտումը դեպի դպրոց հնարավորություն կստեղծի հետագայում ինտեգրվելու շրջապատին և դառնալու հասարակության լիիրավ անդամ:

Ուսուցիչը դասարանում իր օգտագործաց մեթոդով պետք է օգնի նման աշակերտին իր մասնագիտական կողմնորոշման հարցում, հաշվի առնելով երեխայի նախասիրությունները:

Աշխատանք լսողական խնդիրներ ունեցող աշակերտների հետ

Հատուկ աշխաանք պետք է տանել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն աշակերտի հետ, որն ունի լսողական խանգարում:Նման երեխաների հետ աշխատելիս դասապրոցեսի կազմակերպման ժամանակ կատարում եմ բազմաշերտ և բազմաբնույթ աշխատանք: Էլ ավելի պարզեցնում եմ հարցերը, պահանջում կարճ պատասխան:Դասի պլանը կազմելիս հատուկ ուշադրություն եմ դարձնում նման աշակերտի վրա ՝ միշտ պահելով ուշադրությանս կենտրոնում: Հարցերը տալիս եմ մի փոքր բարձր:Թեման բացատրելիս նայում եմ աշակերտին, բառերը արտասանում հստակ, արտահայտիչ ու դանդաղ: Երբեմն մոտենում եմ աշակերտին ժպիտով,բառը կրկնում եմ մի քանի անգամ, մինչև համոզվեմ որ երեխան լսեց ու ընկալեց:Եթե երեխան կրում է լսողական սարք, հետևել որ այն կրի ճիշտ: Դասարանի մյուս երեխաները չխանգարեն, առավել ևս չծիծաղեն նրա վրա, դրսևորեն հարգալից վերաբերմունք:Պարտադիր է որ ուսուցիչը ուշադրություն դարձնի դասարանում տիրող իրավիջակին, որպեսզի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան չվիրավորվի կամ իրեն նվաստացած չզգա:

Աշխատանք աուտիզմ ունեցող երեխայի հետ

Ուսուցչից հատուկ ուշադրություն է պահանջվում նաև աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատելիս, քանի որ նրանք նույնպես համարվում են ԿԱՊԿՈՒ աշակերտ:Նման պարագայում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման երեխան կարող է մի ուղղությունով լինել շատ զարգացած. Օրինակ ՝ ունենա լավ հիշողություն, կամ ունենա անսահման խորը գիտելիք, իսկ այլ ոլորտում ցուցաբերի բացարձակ անտարբերություն: Նման երեխայի հետ աշխատելիս պետք է լինել շատ համբերատար ու զգուշ: Պեքտ է հաշվի առնել որ նման խանգարում ունեցող երեխաները լինում են ինքնամփոփ ու չշփվող, որովհետև նրանց մոտ խանգարված է լինում հաղորդակցական ոլորտը: Դասարանում միշտ մեկուսանում են, դասնկերների հարցերին պատասխանում անտարբեր ու կտրուկ: Հատկապես գործնական աշխաանքների ժամանակ շատ

ուշադիր եմ, որ երեխան պասիվ չլինի, խմբի անդամներն էլ լսեն ու ընդունեն նրա կարծիքները: Համադասարանցիները ունենան հարգալից վերաբերմունք և լինեն զիջող: Նման աշակերտը պետք է միշտ լինի ուշադրության կենտրոնումՓորձը ցույց է տալիս, որ նման խնդիրներ ունեցող աշակերտները շուտ են բռնկվում և ագրեսիվ են: Կարող են անգամ անտեղի վեճեր առաջացնել: Ուսուչցի խնդիրն ու դերը շատ մեծ է ու կարևոր նման երեխաներին ինտեգրելու դասարանի երեխաների հետ: Ուսուցիչը պետք է կարողանա հասնել այն բանին , որ նման աշակերտը ինքնակամ ընդունի իր սխալը, իսկ համադասարանցիները շարունակեն հանգիստ շփումը:Հնարավոր է նման իրավիճակ ստեղծվի նույնիսկ դասի ժամանակ: Այս դեպքում անհրաժեշտ է, որ ուսուցիչը լինի անսահման համբերատար, ուշադրության կենտրոնում պահի խնդիր ունեցող աշակերտին, չանտեսի նաև դասարանի մյուս երեխաների կարծիքները ու խնդիրները:Դասարանին այս իրավիճակից դուրս բերելու նպատակով կարելի է կատարել լիցքաթափող վարժություններ: Օրինակ աշակերտները ազատ շրջեն դասարանում, հիշեն զվարճալի պատմություններ կամ լսեն ուրախ երաժշտություն: Խանգարում ունեցող երեխային հետևել հայացքով, ժպիտը դեմքին, անել այնպես որ նա վարժությունը կատարի սիրով: Նույնիսկ կարելի է բռնել երեխայի ձեռքերից, փաղաքշել, ասել ոգևորիչ խոսքեր:

Աշխատանք բազմազգայական խանգարում ունեցող երեխայի հետ

Դասերի ժամանակ կարող են խնդիրներ առաջանան, եթե դասարանում կա բազմազգայական խանգարում ունեցող երեխա: Այդպիսի երեխաները ունենում են միաժամանակ մի քանի խանգարումներ ՝ տեսողական, լսողական, մտավոր և այլն: Նման աշակերտի հետ պետք է տանել հատուկ աշխատանք: Պարտադիր ուսուղիչը պետք է ստանա ծնողների աջակցությունը: Նրանց հետ անհրաժեշտ է համագործակցել: Ուսուցիչը պետք է մշակի հատուկ պլան, ծնողների հետ խորհրդակցելով պարզի օրինակ ,որն է առաջնային խանգարումը, ապա ինչ նախասիրություններ ունի երեխան: Անհրաժեշտ է տարբեր մեթոդներով զարգացնել չվնասված զգայարանները, որը կունենա ոգևորող, ինչու չէ նաև իր ուժերի նկատմամբ վստահություն ցուցաբերելու հատկություն: Անհրաժեշտ է ծնողի օգնությամբ պարզել երեխայի վրա ներազդելու, ինչպես նաև կապ հաստատեու մեթոդները: Շատ կարևոր է որ պլանի մեջ ընդգծվի

հարմարեցման ռազմավարություն։Կազմակերպված այս աշխատանքները դասի ժամանակ իրագործելու արդյունքում երեխան կլինի պաշտպանված, կնպաստի նրա դասարանցիների հետ ինտեգրվելու և լիարժեք մարդ զգալու հարցի լուծմանը։

Աշխատանք ինտելեկտի խանգարում ունեցող երեխայի հետ

Ուսուցչից մանկավարժական և մասնագիտական շատ մեծ հմտություններ ու կարողություններ է պահանջվում ինտելեկտի խանգառում ունեցող սովորողների հետ աշխատելիս։ Այս պարագայում ուսուցիչը գործ ունի գլխուղեղի ֆունկցիաների խանգառման հետ , որի արդյունքում երեխայի մոտ առկա են լինում հոգեկան ֆունկցիաների, հատկապես ընկալման, հիշողության, անտարբերության կամ հակառակ, բարձր գոգոռողականության, հետաքրքրությունների բացակայութան երևույթների հետ, որոնք խանգառում են սովորողին գիտելիք ստանալու և իրեն

լիարժեք մարդ զգալուն։ Ուսուցչից պահանջվում է մեծ վարպետություն, որպեսզի չտուժեն դասրանի մյուս երեխաները։ Թեմատիկ պլանը ու օրվա պլանը պետք է կազմել այնպես, որ դասարանի բոլոր երեխաները ընդգրկվեն դասապրոցեսին։ Շատ կարևոր է խնդիր ունեցող աշակերտի համար կազմած ծրագրի նյութերը լինեն պարզ։ Թեման բացատրելիս ուսուցիչը պետք է խոսի շատ պարզ, օգտագործի մատճելի ու ընկալելի տերմիններ։ Նյութը մտապահելու նպատակով անընդհատ կրկնել, բայց օգտագործել նոր բառեր, որպեսի երեխան միատարությունից չհոգնի ։ Օգտակար ու ցանկալ է, երբ դասի ժամանակ օգտագործվում են նկարներ։ Ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից կարելի է հիշել մուլտֆիլմ, հեքիաթ։ Օրինակ 5-րդ,6-րդ դասարաններում, ՀԵՊ-ի դասաժամերին մարդկային արժեքներից խոսելիս կարելի է հիշել «Կարմիր Գլխարկ» մուլտֆիլմը։ Երբ Կարմիր Գլխարկը տատիկին օգնելու նպատակով անտառում փորձյությունների միջով անցնելով, կարկանդակները հասցնում է տատիկի խրճիթ։ Հանդիպում է չար գայլին, որը բարի որսորդի կրակոցով ստանում է արժանի պատիժ։ Ներառականի խնդիր ունեցող աշակերը կարողանում է ընկալել, որ չարը անպայման պատժվելու է։Այս մեթոդով դասը վարելը շատ

արդյունավետ է, որովհետև օգտագործվող բառերը կարող են դժվար ընկալելի լինել, իսկ գայլի,թռռնիկի,որսորդի կերպարներով ընկալելի դառնան ծերերին օգնելու գաղափարը կամ չարը միշտ պարտվում է, բարին հաղթում։Դասարանի մնացած երեխաները կարող են իրենք պատմել մուլտֆիլմը։ Դրանով ապահովվում է ողջ դասարանի ընդգրկվածությունը։

Աշխատանք տեսողական խնդիր ունեցող երեխայի հետ

Մեր առօրիաում շատ հաճախ ուսուցիչները հանդիպում են տեսողության խնդիր ունեցող սովորողների։ Նման աշակերտ ունեցող դասարանի հետ աշխատելու համար ուսուցչից պահանջվում է շատ հմտություն ու կարողություն։ Անհրաժեշտ է նման իրավիճակում աշակերտին ճիշտ տեղ նստեցնելը։ Հաշվի առնել արևի լուսավորությունը, գրատախտակի հեռավորությունը, դասարանի երեխաների հասակը, աշակերտի տեսողության սրությունը և այլն։ Եթե երեխայի տեսողությունը շատ ցածր է, ուսուցիչը պետք է նախընտրի բանավոր հարցումը։Օրինակ հասարակագիտության ժամին ես ուշադրություն եմ դարձնում բանավոր խոսքին, հարցերով ընկալելի դարձնում օրվա լրատվության նյութերը։ Խմբային աշխատանք կատարելիս տեսողության խնդիր ունեցող աշակերտին հանձնարարում եմ ավելի շատ լսել քան կարդալ ու գրել։ Ունեմ շատ տրամաբանող ու ունակ աշակետ, որն ունի նմանատիպ խնդիր ՝ կրում է ակնոց և շուտ հոգնում է։ Նրան գնահատում եմ հիմնականում բանավոր խոսքով։ Թույլ եմ տալիս մի քանի րոպե փակել աչքերը, կամ պարանոցի, իրանի մկանների լիցքաթափող վարժություններ կատարել։ Աչքի մկանների լարվածությունը հանող վարժություն է օրինակ փակել աչքերը և փակ աչքերով բիբերը շարժել աջ, ձախ, վերև, ներքև կամ աչքերը կկոծել։ Շատ էֆեկտիվ է, երբ աշակերտին առաջարկվում է պատուհանից դուրս նաել և հայացքը կենտրոնացնել ծառի կամ շենքի հեռավոր մի կետի վրա, հաշվել միչև 3-ը։Նմանատիպ խնդիր ունեցող աշակերտի նկատմամբ պետք է հատուկ հոգատարություն կազմակերպել, որպեսզի նա չվիրավորվի և նվաստացած չզգա։ Օրինակ նստարանին մոտեցնել պաստառը կամ նկարը, գծապատկերը։ Շատ կարևոր է, որ այդ քայլերը կատարեն համադասարանցիները։ Դրանով խնդիր ունեցող աշակերտը ավելի լիարժեք է զգում իրեն և հեշտ է ինտեգրվում։ Սա շատ կարևոր է հետագայում լուծելու մի հիմնարար խնդիր ՝ դառնալ հասարակության լիարժեք

քաղաքացի, որն մյուսների նման ունի խնդիրներ և այդ խնդիրները լուխգոգածոելի են։Դպրոցում երեխաները պետք է պաշտպանված լինեն, այդ հարցի լուծումը կարևոր է նաև դասերի ժամանակ։ Օրինակ 8-րդ դասարանում հասարակագիտության ժամ է։ Դասի թեման է «Մարդու պահանջմունքները»։ Երեխաները սովորում են մարդու նյութական և հոգևոր պահանջմունքները։ Վերջնարդյունքում իմանում են մարդու պահանջմունքների անհրաժեշտությունը։ Այս պահանջմունքները թերի կլինեն և անիրագործելի եթե երեխան չիմանա իր անվտանգության, ինչպես նաև հասարակությանը լիարժեք ինտեգրվելու իրավունքը։Մենք՝ ուսուցիչներս, անհրաժեշտ պետք է համարենք մեր դասաժամերին կիրառել մեթոդներ ու հմտություններ, որպեսզի երեխային տանք գիտելիքներ, որով երեխան լինի պաշտպանված, հասկանա, որ բոլոր մարդիկ, առավել ևս երեխաների իրավունքները պաշտպանելը օրենքով ամրագրված են, որ դրանք շրջանցելը հանցագործություն է։

Բուլինգ

Բուլինգը անչափահասների շրջանում տարածված վատ արարք է։ Շատ հաճախ բուլինգի ենթարկվող անչափահասը դառնում է ֆիզիկական բռնության զոհ։ Սա ավելի լուրջ խնդիր է քան ծխելը կամ ալկոհոլ օգտագործելը։ Բուլինգի ենթարկող անձին անվանում են բուլեր։ Ցավոք սրտի երեխաների շրջանում շատ հաճախ ենք հանդիպում բուլինգի դրսևորման դեպքերի, որոնք արտահայտվում են տաբեր ձևերով՝ ծաղրանք, բռնություն, արհամարանք, խթրականություն, պիտակավորում և այլն։Հատկապես հասարակագիտության ժամերին երբ անընդհատ խոսվում են հասարակություն, մեծ և փոքր խմբեր, իրավունք, պարտք, պահանջմունք, քաղաքացիական հասարակություն, օրենք, օրինազանց, հանցանք, զանցանք, արդարադատություն, դատավարություն, իրավահավասարություն և այլ հարցերի մասին անհրաժեշտ է ցուցաբերել ճիշտ մոտեցում և աշխատրել առաջացած վեճերը հարթեցնել սահուն, որպեսզի երեխաներից ոչ մեկը չտուժի։Շատ հաճախ դասարանում, եթե կան սոցիալապես անապահով կամ

ֆիզիկական արատ ունեցող երեխաներ, նկատվում է ընկճվածություն, մեկուսացում, չշփվելու երևույթներ: Նման պարագայում ուսուցիչը պետք է լինի շատ զգույշ, որպեսզի բուլլինգ իրականացնող աշակերտը զգա իր սխալը, բացատրի դասընկերոջը, որ ինքը սխալ է հասկացել իրեն, կամ համոզիչ բառերի, ձեռքի շարժումների, դեմքի արտահայտությունով հաստատի ,որ իրեն ճիշտ չի պահել: Շատ ցավալի ու վտանգավոր երևույթ է, երբ երեխային պիտակավորում են կամ անտեսում: Սա նույնպես բուլինգի ձև է, որի վրա պետք է ուշադրություն դարձնի ուսուցիչը: Հատկապես դասաժամերին, երբ կիրառվում է դերային խաղ մեթոդը, որը շատ ուսանելի է: Դերերը բաժանելիս պետք է հաշվի առնել երեխայի ֆիզիկական արատը(կակազող է, լավ չի լսում, կաղ է և այլն. .) կամ սոցիալական վիճակը(ունևոր է կամ չունեվոր) և նույնիսկ կարգավիճակը՝ ծնողազուրկ է կամ ունի խորթ ծնողներ:

Այս իրավիճակում չպետք է ասել ՝

- Դուք չեք կարող
- Դա քո մոտ չի ստացվի
- Այդքան գիտելիք չունես և այլն. .

Ընդհակառակը, երեխային պետք է ոգևորել, անել անպես, որ երեխան ինքնահաստատվի և վստահ լինի իր ուժերի վրա:

Բոլոր կիրառվող մեթոդները պետք է նպաստեն կայուն գիտելիք տալու խնդրի լուծմանը:

10-րդ դասարանում ունենք «Ազգային մշակույթ» թեմա: Որոշեցինք սովորել ազգային պար ՝ «Հայկական քոչարի»: Երեխաները շատ ոգևորված էին: Դասարանում սովորողներից մեկը ուներ ֆիզիկական արատ, խմբի հետ պարելը չէր ստացվում:

Դասարանով հարցը կազմակերպեցինք այնպես, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան նվաստացած չզգա: Ընդհակառակը երեխաները իմ թելադրանքով արեցին այնպես, որ նա համաձայնվեց պարել:

- Դու մեզանից լավ ես պարում
- Քո մոտ այս շարժումը ավելի լավ է ստացվում

- Դու երաժշտությունը շատ լավ ընկալում ես
- Պարի ռիթմը դու ես պահպանում և այլն. .

Համադասարանցիները շատ գոհ էին, որ նա համաձայնվեց պարել: Չնայած պարը հասկանալի պատճառներով լավ չստացվեց, բայց երեխաները գոհ էին, որ իրենց դասընկերը ուրախ ժպտում էր:Բուլինգ իրականացնող աշակերտը պետք է հասկանա, որ բոլոր մարդիկ օրենքի առաջ հավասար են: ՀՀ-ի իրավական համակարգին ծանոթ լինելը երեխաներին հնարավորություն կտա կյանքում լինել ազնիվ, ապրել շիփ-շիտակ:11-րդ դասարանում ունենք «Դատական համակարգը Հայաստանում» թեմա, որի լավ ընկալելը, առաջադրվող հարցերին ճիշտ պատասխանելն ու ճիշտ մոտենալը կարևոր է առողջ հասարակություն ունենալու համար: Դպրոցից համապատասխան գիտելիք ստանալու խնդիրը օրակարգի ու ժամանակաշրջանի հրամայականն է: Եթե երեխան գիտակցեց, որ յուրաքանչյուր մարդ օրենքով պաշտպանված է, ուրեմն արդարադատությունը նրա համար կլինի առաջնային: Դիմացինի իրավունքները հարգելը կդառնա նրա կյանքի ճիշտ ուղեկիցը:Այս հարցում շատ կարևոր է դպրոցի ուսումնադաստիարակչական հարցերին ճիշտ մոտենալը: Բոլոր դեպքերում, դպրոցից պահանջվում է դաստիարակության հարցերը ճիշտ կազմակերպել, որ երեխաները գիտակցեն թե ինչքան կարևոր է օրենքն իմանալը: Շրջապատում իրենց դրսևորեն այնպես, որ վտանգավոր արարք կատարած մարդու, կամ խմբի կողմից սպառնացող վտանգին կարողանան դիմակայել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանում» թեման ուսումնասիրելիս հասկանալի է դառնում.

- Բոլոր երեխաները պետք է ունենան անսահման հոգածություն պետության կողմից
- Դպրոցը պետք է ապահովի երեխայի հոգևոր պահանջմունքները
- Երեխան ստանա պահանջված գիտելիքները, որպեսզի դառնա հասարակության լիարժեք անդամ
- Դպրոցում իրենց պաշտպանված զգան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, որպեսզի կարողանան դառնալ հասարակությանը պիտանի և իրենց լուման ունենան երկրի բարգավաճման գործում

Ժամանակակից աշխարհի հարաճյուն պահանջները պարտադրում են ունենալ լավ կրթություն: Գիտելիք, կարողություններ ու հմտություններ ունեցող սերունդը կկարողանա դիմակայել աշխարհի առաջադրած փորձություններին: Առողջ հասարակություն ունենալը կախված է անհատներից, որոնցից յուրաքանչյուրը պարտավոր է իր խոսքն ու գործը ի նպաստ դնել այդ հայրենանվեր գործին:Այս կարևոր հարցերը կիրականան, եթե ունենանք արդի աշխարհին բավարարող, ամուր գիտելիքներ ունեցող սերունդ:Իսկ այդ խնդրի լուծումը կապված է միայն ու միայն դպրոցից, որին պետք են ուսուցչի վեհ կոչմանը արժանի մասնագետներ:Իմ կարծիքով այսօրվա կրթական բարեփոխումները կտան բոլոր հարցերի պատասխանները:

Առաջարկություն

Դպրոցը զինել ժամանակակից նյութատեխնիկական բազայով: Առաջնորդվել նորացված ծրագրերով, նոր չափորոշիչներով, հմտություններով ու կարողություններով: Քայլել ժամանակի պահանջներով, տեղեկացված լինել և դասերին օգտագործել նոր մեթոդներ ու հնարներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գործնական քայլեր ներառման ճանապարհին

(*Երևան Զանգակ հրատարակություն - 2021*)

2. Եկեք սովորենք երեխաների իրավունքները

(*Ուղեցույց ուսուցիչների համար - Երևան 2021*)

3. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ

(*Ուսուցչի ձեռնարկ Երևան 2005 – Խաչատրյան Ս. ,Պետրոսյան Ս. , Հակոբյան Ս. , Խախամյան Մ. , Տեր-Մկրտչյան Թ. , Ավանեսյան Վ.*)

4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ,վարժություններ(*Կրթության ազգային ինստիտուտ, լոռու մասնաճյուղ – Վանաձոր 2008*)